ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/175

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Վարդան Սարգսյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝ Վ. Սարգսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-3/7» ծածկագրով գնանշման հարցում, շախմատի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10710-2020 գրությամբ «Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.07.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/2198-2020 գրության հիման վրա, 17.07.2020թ.-ին «Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 17.07.2020թ.-ին:

17.07.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/175 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

23.07.2020թ.-ին և 31.07.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 23.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 31.07.2020թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 14.07.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/2198-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-3/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսունասիրելով Վարդան Սարգսյան ԱՁ-ի հայտը պարզեց, որ ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. Հավելված 1-ում բացակայում է հրավերով պահանջված անձը հաստատող փաստաթղթի տեսակը: Մասնակցի կողմից նշված է միայն համարը:

2. Տեխնիկական բնութագրում նշված է «շախմատի խաղաքարերի հիմքի տրամագիծը 20 մմ /+-3/», որը չի համապատասխանում հրավերի պահանջին, քանի որ

հրավերի տեխնիկական բնութագրում նշված է, որ «Բոլոր խաղաքարերի տրամագիծը պետք է լինի 27 մմ /+-3մմ/»:

3. Տեխնիկական բնութագրում նշված է «բարձրությունը 5.4սմ /փակված վիճակում, +-1սմ/», որը չի համապատասխանում հրավերի պահանջին, քանի որ հրավերի տեխնիկական բնութագրում նշված է, որ «բարձրությունը՝ 4.5սմ /փակված վիճակում, +-1սմ/»

4. Տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով պահանջվող «Խաղադաշտերի մակերեսները պետք է պատրաստված լինեն 2,5 մմ /+-0.5մմ/ հաստությամբ փայտե շերտատախտակից և/կամ ՄԴՖ» նախադասությունը՝ խաղադաշտերի մակերեսների պատրաստման նյութի (հումքի) վերաբերյալ տեղեկությունը:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և առաջարկեց մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցումները կատարվել են armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով:

Սահմանված ժամկետում Վարդան Սարգսյան ԱՁ-ի կողմից չներկայացվեց անհամապատասխանությունների շտկված տարբերակները, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները որոշեց մերժել Վարդան Սարգսյան ԱՁ-ի հայտը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-3/7» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 17.07.2020թ.-ին գրությամբ դիմել է «Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.07.2020թ.-ի

թիվ 26/26-1/10710-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2020/175 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շախմատի ձեռքբերման նպատակով 18.06.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-3/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ն:

iii. Մասնակիցը թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցումին մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-3/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին՝ կից ներկայացնելով «Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն թիվ 1.1 հավելվածի:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 26.06.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 1 հավելվածում բացակայում է հրավերով պահանջված անձը հաստատող փաստաթղթի տեսակը՝ նշված է միայն համարը: Տեխնիկական բնութագրում նշված է «շախմատի խաղաքարերի հիմքի տրամագիծը 20 մմ /+-3/», որը չի համապատասխանում հրավերի պահանջին, քանի որ հրավերի տեխնիկական բնութագրում նշված է, որ «Բոլոր խաղաքարերի տրամագիծը պետք է լինի 27 մմ /+-3մմ/»: Տեխնիկական բնութագրում նշված է «բարձրությունը 5.4սմ /փակված վիճակում, +-1սմ/», որը չի համապատասխանում հրավերի պահանջին, քանի որ հրավերի տեխնիկական բնութագրում նշված է, որ «բարձրությունը՝ 4.5սմ /փակված վիճակում, +-1սմ/»:

Տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով պահանջվող «Խաղադաշտերի մակերեսները պետք է պատրաստված լինեն 2,5 մմ /+-0.5մմ/ հաստությամբ փայտե շերտատախտակից և/կամ ՄԴՖ» նախադասությունը՝ խաղադաշտերի մակերեսների պատրաստման նյութի (հումքի) վերաբերյալ տեղեկությունը:

v. Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցրնել նիստը և ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի միջոցով 06.07.2020թ.-ին նույնաբովանդակ ծանուցում է ուղարկել Մասնակցին՝ հայտնելով, որ պահանջվող փաստաթղթեր անհրաժեշտ է ուղարկել Հանձնաժողովի քարտուղար՝ a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ «Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից չի ներկայացվել անհամապատասխանությունների շտկված տարբերակը, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, 10.07.2020թ.-ին որոշել է Մասնակցի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10710-2020 գրությամբ «Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացվում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 4.3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, տեխնիկական բնութագրերը:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շախմատի ձեռքբերման նպատակով 18.06.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-

20-3/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցումին մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-3/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին՝ կից ներկայացնելով «Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն թիվ 1.1 հավելվածի:

Հանձնաժողովի 26.06.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 1 հավելվածում բացակայում է հրավերով պահանջված անձը հաստատող փաստաթղթի տեսակը՝ նշված է միայն համարը: Տեխնիկական բնութագրում նշված է «շախմատի խաղաքարերի հիմքի տրամագիծը 20 մմ /+-3/», որը չի համապատասխանում հրավերի պահանջին, քանի որ հրավերի տեխնիկական բնութագրում նշված է, որ «Բոլոր խաղաքարերի տրամագիծը պետք է լինի 27 մմ /+-3մմ/»: Տեխնիկական բնութագրում նշված է «բարձրությունը 5.4սմ /փակված վիճակում, +-1սմ/», որը չի համապատասխանում հրավերի պահանջին, քանի որ հրավերի տեխնիկական բնութագրում նշված է, որ «բարձրությունը՝ 4.5սմ /փակված վիճակում, +-1սմ/»: Տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով պահանջվող «Խաղադաշտերի մակերեսները պետք է պատրաստված լինեն 2,5 մմ /+-0.5մմ/ հաստությամբ փայտե շերտատախտակից և/կամ ՄԴՖ» նախադասությունը՝ խաղադաշտերի մակերեսների պատրաստման նյութի (հումքի) վերաբերյալ տեղեկությունը:

Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի միջոցով 06.07.2020թ.-ին նույնաբովանդակ ծանուցում է ուղարկել Մասնակցին՝ հայտնելով, որ պահանջվող փաստաթղթեր անհրաժեշտ է ուղարկել Հանձնաժողովի քարտուղար՝ a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին:

«Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից չի ներկայացվել անհամապատասխանությունների շտկված տարբերակը, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, 10.07.2020թ.-ին որոշել է Մասնակցի հայտը մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը

կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ն, Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10710-2020 գրությամբ «Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/175 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Վարդան Սարգսյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**